ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«12» 12 2025 թ.
№ պետհ/4219

«ԴԱՍՈ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 00022766/
ՀՀ, ք. Երևան, Բաշինջաղյան 198 Ա
էլ. փոստի հասցե՝ dasocprint@gmail.com
Հեռ.՝ +374 33 33 93 96

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԴԱՍՈ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ի միջև 28.02.2025թ. կնքված N ԳՀԾՁԲ-25-8/1-6 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) և 09.06.2025թ. կնքված թիվ 1 համաձայնագրի (այսուհետև՝ Համաձայնագիր) շրջանակներում «ԴԱՍՈ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ն ի թիվս ծառայության արդյունքում մատակարարվելիք այլ ապրանքների պետք է մատակարարեր նաև 447 հատ «Թղթապանակ եռակողմ կափույրով», 979 հատ «Թղթապանակ զինանշանով (հատուկ)» և 227 հատ «Գրասեղանի օրացույց /Նոթատետր/», որոնք ամբողջությամբ չեն մատակարարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետը՝ (խախտվել է ծառայության մատուցման ժամկետը) ՀՀ պաշտպանության նախարարությունը 11.12.2025թ.-ին միակողմանի մասնակի լուծում է վերոնշյալ պայմանագիրը և կից համաձայնագիրը:

Տեղեկացնում եմ, որ «ԴԱՍՈ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005028106** հաշվեհամարին փոխանցել **129,355** ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 5.3 կետի համաձայն) և **15,585** ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 5.2 կետի համաձայն) որը հաշվարկված է մինչև 03.11.2025թ. ներառյալ: Ինչպես նաև Պայմանագրի միակողմանի մասնակի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է **362,361** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005000758** հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է **543,541** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900008000664** հաշվեհամարին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման

գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ եթե մինչև 2025թ. դեկտեմբերի 22-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված **362,361** ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և **543,541** ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «ԴԱՍՈ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: **Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2025թ. դեկտեմբերի 22-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2074 սենյակ:**

Տեղեկացնում եմ նաև, որ պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ինչպես նաև հաշվարկված տույժի ու տուգանքի գումարերը Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

Հարգանքով՝

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ